

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Թագաւոր Կայսրի հեռագիրը Լիվադիայից Ամենայն Հայոց Կաթուղիկոսին:

«Սրտանց շնորհակալ եմ Ձերդ. Սրբութիւնից աղօթքի և բարեմաղթութիւնների համար։

«Թող օգնէ Ձեզ Տէրը ծառայելու հայկական եկեղեցուն և Ձեզ յանձնուած հօտը կրթելու հաւատարմութեան և հպատակութեան մէջ իրանց թագաւորներին և Ռուսաստանին։

«ՆԻԿՕԼԱՅ»

Ամենայն Հայոց Կաթողիկոսի հեռագիրը Թագաւոր Կայսրին, Լիվադիա:

Ընդունելով Հայաստանեայց Եկեղեցու հնագոյն տաճարի մէջ, սրբոյն Գրիգորի Լուսաւորչի Գահի առաջ երդումն հաւատարմութեան առ Ձերդ. Կայսերական Մե-

ծութիւնը և անձնուիրութեան՝ իմ նոր հայրենիքի հիմնական օրէնքներին, ես վերառաքում եմ առ Բարձրեալն ջերմ աղօթք Ձերդ Կայսերական Մեծութեան և ամբողջ Արքայական Տան թանդագին առողջութեան համար։ Ողորմութեամբն Աստուծոյ արժանանալով սուրբ օծման շնորհաց իմ հօտի ծանր սպասաւորութեան համար, ես տուի երդումն Ամենաբարձրեալին՝ անսասան պահպանել Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու հին օրէնքները և կանոնները և օրէնքները Ռուսաց Կայսրութեան, հովանաւորին այդ եկեղեցու, հաւատալով որ Ձերդ Կայսերական Մեծութիւնը, իբրև հզօր պաշտպան հայկական հին եկեղեցու և հօտի, Ձեր անփոփոխելի հոգածութեամբ նրա բարգաւաճման համար, կը տարածէք Ձեր Բարձր հովանաւորութիւնը, ինչպէս և ի Տէր հանգուցեալ Ձեր երջանկայիշատակ Թագակիր նախնիքը, հայոց եկեղեցու վրայ և կը պահպանէք նրա բաղմադարեան կանոնները։ Մնալով, իմ հօտի հետ միասին, այն անխախտելի հաւատի մէջ, թէ միայն Ռուսական Պետութեան հետ ամուր և անքակտելի միութեան մէջ է պարփակուած Ձեր հաւատարիմ հպատակ հայ ժողովրդի բարգաւաճման գրաւականը, ես հաստատ հաւատ ունեմ, որ Ձերդ Մեծութիւնը կը լինի նրա մշտական նեցուկը բոլոր փորձութիւնների մէջ, որոնց նա ենթակայ է լինում ճակատագրով, և Ձեր անճառելի գթութեամբ հայրաբար գիջողաբար կամոքէք իմ հօտի մի քանի զաւակների վիճակը, որոնք իրանց վրայ են գրաւել ճակատագրի հարուածները։ Եւ այսօր, բառնալով ուսերիս վրայ ծանր խաչը սպասաւորութեան իմ հօտի, յանձնուած ինձ Աստուծուց, Ձերդ Մեծութիւնից և ժողովրդի կամքով, ջերմ աղօթքներ եմ առաքում վասն բարեկեցութեան և երկարակեցութեան Ձերդ Կայսերական Մեծութեան, Թագուհի Կայսրուհիների, Թագաժառանգ Ցեսարէվիչի և ամբողջ Արքայական Տան և վասն մեծութեան և հզօրութեան յաւնաժամանակ հայրենիքի, Մեծի Մօրն՝ Ռուսիոյ։

Կովկասի Փոխարքայի հեռագիրը Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

«Մատուցանում եմ Ձեր օծման նշանակալից օրը բարեբաղդութեան և աջողութեան լաւագոյն բարեմաղթութիւններ յօգուտ հայ ժողովրդի և ի հաւատարիմ հպատակութիւն Թագաւոր Կայսրին։ Ցաւում եմ, որ այդ օրը չը կարողացայ լինել Էջմիածնում։ Ցանձնում եմ ինձ Ձեր սուրբ աղօթքներին»։

ՔԱՂՈՒԱԾՔ ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՄԻՆՕԴԻ

—Ց 3 յուլիսի Սինոդն լուեալ զգործ կառուցման ծախիւք Աղէքսանդրի Ղարաջեան երկյարկ շինութեան ի վերայ եկեղեցապատկան գետնոյն Պետրովկ քաղաքի ի յիշատակ վաղաթառամ որդւոյ իւրոյ Նիկողայոսի, հրամայեաց. թոյլ տալ Աղէքսանդրի Ղարաջեանց կառուցանել ծախիւք իւրովք երկյարկ տուն ի վերայ եկեղեցական գետնոյ ի Պետրովկ քաղաքի պայմանօք, որ յիշատակեալ ի յայտարարութեան նորա (այն է 4 կրպակք ի ներքին յարկի և յերկու- բնակարանաց՝ 9 սենեակ՝ ի վերին յարկի, այնու՝ զի արդիւնք շինութեան գործադրեսցին ի պահպանութիւն եկ. ծխական դպրոցի հայոց տեղւոյն)։ Թ. 405

—Ց8 յուլիսի Սինոդ լուեալ զգրութիւն պրոկուրորի նահանգական դատարանի Երևանայ և զգործ մեղադրանաց Ստեփաննոս քահանայի Իսկեանդարեանց Սուանվերդի գեղջ գաւառին Աղէքսանդրապոլի ըստ 1024 յօդ. կանոն. քր. դատավարութեան հրամայեաց. հասու լեալ հանգամանաց գործոյն ատեանս առաւել քան հաւանական համարի զի իրեղէնք Ստեփաննոս քահանայի Իսկեանդարեանց գողացեալ են ի ձեռն այլոց ոմանց և ոչ գաղտեալ ի

նմանէ, որպէս երևի այն և ի ցուցմանէ Կորակ վկայի, ուստի ծանուցանել պրոկուրորի նահանգական դատարանին Երևանայ եթէ ըստ եղրակացութեան Սինոդիս հարկ է կարճել զգործս անպարտ ճանաչելով զՍտեփաննոս քահանայն Իսկեանդարեանց։ Թ. 408

—Ի 15 յուլիսի Սինոդ լուեալ զգործ չահագործման հանաց Գանձասարայ և Խօթայ վանուց հրամայեաց. Ոչ գտանելով արգել ինչ առ այն, զի Հմայեակն Վահանեան ըստ պայմանագրին յանձն արասցէ բնակչի Բագու քաղաքի Մանուչարայ Խաչատրեան Աւագեանց զիրաւունս և զպարտաւորութիւնս իբրև զվարձակալ կալուածոյն Գանձասարայ ճանաչել զնա, զԱւագեանցն վարձակալ յիշատակեալ կալուածոցն ըստ ամենայնի համեմատ պայմանաց դաշնագրին, կռելոյ ընդ Հմայեակայ Վահանեան ի 1-ն փետրուարի 1909 ամի։

—Ի Նմին աւուր Սինոդ լուեալ զգործ ձեռնադրութեան բնակչի Բարանա գեղջ գաւառին Ղազախի Կամսարայ Տէր Աւետսեան հրամայեաց. թոյլ տալ Կոնսիստորիային Վրաստանի ընդունել զբնակիչն Բարանայ գեղջ գաւառին Ղազախի զԿամսարն Տէր Աւետսեանց ի հոգևոր կոչումն և առաջադրել Առաջնորդի թեմին ձեռնադրել զնա քահանայ Դուեղ գեղջ։ Թ. 420

—Ի 24 յուլիսի Սինոդ լուեալ զխնդիր ծխական հոգաբարձութեան եկեղեցւոյն Գիւլաքարակ գեղջ գաւառին Լօռուայ յաղագս թոյլատրելոյ հատանել յանտառէն Մարցայ զանհրաժեշտ քանակութիւն փայտից ի պէտս նորակառոյց դպրոցին գեղջն հրամայեաց, առաքելով զխնդրագիր հոգաբարձութեան Գիւլաքարակ գեղջ պատուիրել Կոնսիստորիային Վրաստանի ճշտիւ ստուգել նախապէս թէ ո՞րչափ պէտս ունի փայտեղէնի նորակառոյց դպրոց տեղւոյն՝ տնօրինել տալ զայն յանտառէն Մարցայ ձրիաբար։ Թ. 442

—Ի 29 յուլիսի Սինոդ լուեալ զգործ կրկնամուսնութեան Մուրվաթի Պետրոսեան ի ձեռն Աղէքսանդր քահա-

նայի Մամիկոնեանց Սարգսաշէն գեղջ գաւառին Շուշւոյ, առ կենդանութեամբ առն նորա Հայրապետի Մանուչարեանց հրամայեաց. ունելով առաջի աչաց, զի Մուրվարն Բալասանեան առ կենդանութեամբ առաջին առն մտեալ է յերկրորդ ամուսնութիւն ընդ Սարգսի Ամիրջանեան ի ձեռն Աղէքսանդր քահանայի Մամիկոնեան, ուստի զայդ պսակ ճանաչել անվաւեր և զկինն և զյիշեալ պսակադիր քահանայն յանձնել ի դատ մարմնաւոր իշխանութեան ըստ ի վեր անդր ցուցեալ օրինաց. Թ. 446

—Ի նմին աւուր Սինոդ լուեալ զգրութիւն պրոկուրորի նահանգական դատարանի Երևանայ և զգործ մեղադրանաց Գարեգին քահանայի տէր Խաչատրեանց Ալէքսանդրապոլ քաղաքի ըստ 362 յօդ. պատժ. օրինաց հրամայեաց. քննելով զգործ Սինոդս գայ յեզրակացութիւն զի արդարև Գարեգին քահանայ տէր Խաչատրեան տուեալ է զվկայական մահուան Բեկլարայ Թումասեան, որ իսկապէս ի կեանս է, վասնորոյ և գործեալ է զյանցանս, նախատեսեալս յ362 յօդ. պատժ. օրինաց. Զայս եզրակացութիւն ծանուցանել պրոկուրորի շրջանական դատարանին Երևանայ դարձուցանելով զգործն. Թ. 453

—Ի 3 օգոստոսի Սինոդ լուեալ զգործ յաղագս պահանջից Արսէն ա. քահանայէ Բագրատունւոյ զ717 ռ. 75 կ. գանձանակադրամս վանուցն ս. Երուսաղէմայ հրամայեաց. խստիւ պահանջել ի տէր Արսէն աւագ քահանայէ Բագրատունւոյ զ717 ռ. 75 կ., ոչ հասուցեալս ըստ պատկանելոյն, տալով նմա ժամանակամիջոց զերկուս եօթնեակս վասն վճարելոյ զայդ գումար, իսկ ի դէպս ոչ վճարելոյ յընթացս նշանակեալ ժամանակի դադարեցուցանել ի քահանայագործութենէ խսպառ յանձնելով զգործն ի դատ մարմնաւոր իշխանութեան վասն արկանելոյ քահանայն ընդ քրէական պատասխանատուութեամբ ի մեղադրել զնա ի վատնման, յարուցանելով հանդերձ քաղաքական պահանջ. Թ. 471

—Ի 10 օգոստոսի Սինոդ լուեալ զյայտարարութիւն վանական կառավարութեան, որով խնդրէ կարգել յատուկ

ցանձնաժողով վասն ընդունելութեան և նախնական պատրաստութեան յաւուրս ս. Օծման Վեհափառ Կաթուղիկոսի հրամայեաց. կարգել անդամս ցանձնաժողովոյ ընդունելութեան հիւրոց և ուխտաւորաց յաւուրս Օծման Վեհափառ Կաթուղիկոսի զՏ. Տ. Դարեգին, Խորէն Մուրադբէկեան և Ներսէս Տէր-Միքայէլեան վարդապետս և զտնտես ճեմարանի զպ. Մեսրոպն Արովեան, յանձն առնելով ցանձնաժողովոյն նախ՝ ընդունել ի Վանական Կառավարութեան Մայր Աթոռոյ զամենայն կահ կարասիս և զայլ պարագայս ընկալեալս ի Տ. Մատթէոս վարդապետէ կանոնաւոր ցուցակաւ, զորոյ օրինակն առաջի առնել Սինոդիս, երկրորդ՝ բանալ միաբանական սեղանատուն վանուցս յընթացս միոյ եօթնեկի, երրորդ՝ ընդունել ի պէտս նախապատրաստական ծախուց ռուբլիս հինգ հարիւր ի գանձապահէ Սինոդիս, չորրորդ՝ հոգ առնել մաքրութեան գաւթի վանուցս և շրջակայիցն և հինգերորդ՝ վասն ցուցակագրելոյ զամենայն հաշիւս մտից և ծախուց տալ յանձնաժողովոյն զժապաւինեալ մատեան մի ի Սինոդէս։ Թ. 488

— Ի 12 օգոստոսի Սինոդ լուեալ զգրութիւն պ. պրոկուրորի նահանգական դատարանին Երևանայ և զգործ մեղադրանաց Վարդան քահանայի Փահլևանեան Զիրախլի գեղջ գաւառին Ալէքսանդրապոլի ըստ 236 յօդ. պատժ. օրինաց հրամայեաց. զՎարդան քահանայ Փահլևանեան Զիրախլի գեղջ գաւառին Ալէքսանդրապոլու համարելով յանցաւոր ի կեղծ ցուցման, ծանուցանել պրոկուրորի նահանգական դատարանին Երևանայ, եթէ Սինոդս չունի ինչ ընդդէմ յանձնելոյ զնա ի դատ ըստ 236 յօդ. պատժ. օրինաց։ Թ. 491.

— Ի 19 օգոստոսի Սինոդ լուեալ զգործ ձեռնադրութեան բնակչի Աչաջուր գեղջ գաւառին Ղազախի Ցակովբայ տէր Ստեփանեան Քարտաշեանց հրամայեաց. զմիջնորդութիւն Կոնսիստորիային Վրաստանի, որ վասն ձեռնադրելոյ զՑակովբն Քարտաշեան Խաւարաձոր և Ներքին Աղդան գիւղօրէից՝ թողուլ առանց հետևանաց, քանզի ընծայացուն չէ աւարտեալ զընթացս երկրորդ դասարանի։ Թ.502

—Ի 24 օգոստոսի Սինոդ լուեալ գյայտարարութիւն Կոնստանդինային Աստրախանի և զինդիր բնակչուհւոյ Ստաւրոպոլ նահանգական քաղաքի Տիրուհւոյ Կարապետեան Պօղովեանց, զնուիրաբերութենէ հողամասին ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ քաղաքին արժողութեամբ 5000 ռուբլեաց հրամայեաց. ըստ 1214 քօդուածոյ I Մ. XI հատ. խնդրել զբարեհաճ տնօրէնութիւն Տ. Նախարարի Ն. Գործոց վասն ընդունելոյ ի սեպհականութիւն ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ Հայոց Ստավրոպոլ նահանգական քաղաքին զհողամասն հանդերձ միայարկեայ փայտաշէն աղիւսապատ շինութեամբն զնուիրեալն ի Տիրուհւոյ Կարապետեան Պօղովեանց. Թ. 505

—31 սեպտեմբերի Սինոդ լուեալ գյայտարարութիւն Կարգադրիչ յանձնաժողովոյ վասն Մ. Օծման վեհափառ Կաթուղիկոսի հրամայեաց. Պատուիրել դանձապահի Սինոդիս տալ հետզհետէ կարգադրիչ Յանձնաժողովոյ Օծման Վեհափառ Կաթուղիկոսի ազդիս զհինգ հազար ռուբլիս վասն ընթացիկ ծախուց. Թ. 523